ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

"ՀԱԷԿ" ՓԲԸԳՃ

_____________ Ա.Ռ. Գրիգորյան

"___" _____________ 2016 թ.

# Նախագծին ներկայացվող պահանջներ

««ՀԱԷԿ» ՓԲԸ ճաշարանի II հարկի վերահատակագծում» նախագծի

Նախագիծը պետք է ընդգրկի հետևյալ բաժինները՝

- ճարտարապետա-շինարարական
- ջեռուցում և օդափոխություն
- տաք ու սառը ջրամատակարարում և կոյուղի
- հեռախոսակապ և ռադիոֆիկացիա
- հակահրդեհային ազդանաշանային համակարգ
- նախահաշիվներ
- մրցութային փաստաթղթեր:

Նախագծի ճարտարապետա-շինարարական բաժնում նախատեսել՝

- գոյություն ունեցող ճաշարանի II հարկի տարածքի վերահատակագծում աշխատասենյակներ (18÷ 20մ²) և սանհանգույցներ ստանալու նպատակով:
- Աշխատասենյակները իրարից բաժանող միջնորմները նախագծել գիպսոկարտոնից ձայնամեկուսիչ շերտով:
- Հատակները միջանցքներում և սանհանգույցներում կերամիկական սալիկներից կամ հնարավորության դեպքում օգտագործել գոյություն ունեցող մոզայիկ հատակը:
- Դռները ՝ մետաղապլաստից:
- Գլխավոր ճակատի կողմից ապամոնտաժել վիտռաժները, հատակից շարել 90 սմ բարձրությամբ պատ պեմզոբլոկից, ջերմամեկուսացումով, դեպի ներս բացվող բարդ փական ունեցող փեղկերով: Պատուհանների ամբողջ մակերեսով նախատեսել ճաղավանդակ:
- Պատուհանները բակային ճակատի կողմից փոխարինել մետաղապլաստից պատուհաններով, դեպի ներս բացվող, բարդ փականներով, փեղկերով:
- Ամբողջ մակերեսով նախատեսել կախովի առաստաղ:

Նախագծման աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ ելակետային տվյալները կտրամադրվեն ՀԱԷԿ-ի կողմից:

Քանդման, ապամոնտաժման և այլ ծավալները ճշտել տեղում չափագրություններով:

Մրցութային փաստաթղթերում, բացի ճաշարանի II հարկի վերահատակագծման տվյալներից ընդգրկել ճաշարանի I հարկի համար կատարված նախագծով նախատեսված աշխատանքների ծավալները (կտրամադրվի ՀԱԷԿ-ի կողմից): Միացյալ ծավալաթերթում բացի աշխատանքների ծավալներից նշել նաև աշխատանքների և նյութերի միավորի արժեքը:

Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը կազմել ՀՀ-ում գործող նորմատիվային փաստաթղթերին համապատասխան:

Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը փորձաքննության հանձնել նախագծային լուծումները պատվիրատուի հետ համաձայնեցնելուց հետո:

Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը պատվիրատուին հանձնել 3 օրինակ թղթի վրա և 1 օրինակ էլեկտրոնային կրիչով:

Գծագրերը կատարել AutoCAD, իսկ նախահաշիվները Excel ծրագրերով:

Գծագրերը, նախահաշիվները և մրցութային փաստաթղթերը էլեկտրոնային կրիչի վրա տեղադրել PDF և էլեկտրոնային (խմբագրելու հնարավորությամբ) տարբերակներով:

ՇՇԲ պետ՝ Մ. Գաբոյան